# Լավագույն ավանդույթները շարունակվում են

## Գիտությունը՝ Հայաստանի զարգացման կարեւոր բաղադրիչ

**Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Ռուսաստանի հայերի միությունն ու Համաբխարհային հայկական կոնգրեսը գիտության, մշակույթի, կրթության զարգացմանը միսված որոշակի ծրագրեր են իրականացնում:

*«Համահայկական այդ կառույցները, հասկանալով այսօրվա դժվարությունները, ծրագրերի միջոցով աջակցում են: Դրանք շոշափելի արդյունքներ են ունենում: Ներկայացվում է գիտության, մշակույթի դերը երկրի, հասարակության զարգացման գործում: Ծրագրերը միսված են գիտության վարկի բարձրացմանը»,*-երեկ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում հրավիրված ասուլիսի ժամանակ ասաց ակադեմիայի նախագահ **Ռադիկ Մարտիրոսյանը:**

Օրերս ավարտվեց «Լավագույն գիտական աշխատանք» ամենամյա մրցանակաբաշխությունը: Հաղթողներն արդեն հայտնի են, մրցանակն էլ՝ որոշված. յուրաքանչյուր անվանակարգի համար սահմանված է շուրջ 600 հազար դրամ: Այն անցկացվում է 2008թ. սկսած: Եվ քանի որ 2011-ը հայտարարված էր երիտասարդների տարի, այս տարի նախաձեռնությունը դռները բացեց մինչեւ 35 տարեկան երիտասարդ գիտնականների առջեւ: Հայտարարվել էր 14 անվանակարգ, որոնց համար ներկայացվել էր 37 գիտական հոդվածաշար, մենագրություն:

*«Մյուս տարիների համեմատ տեղաշարժ է նկատվում: Տարեցտարի աշխատանքների որակը լավանում է: Ուրախալի է, որ հիմնականում մենագրություններ են ներկայացվել»,*-նշեց գիտության զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն, ակադեմիայի թղթակից անդամ Հրանտ Մաթեւոսյանը:

Ասում են, որ փորձագիտական հանձնաժողովն արեւելագիտության եւ ինֆորմատիկայի հարցում անգամ դժվար կացության մեջ է հայտնվել. դժվարացել է սահմանված մրցանակը տալ ընդամենը մեկին, եւ մի քանի մրցանակներ կիսվել են: Լավ են ներկայացված եղել հիմնականում ֆիզիկական եւ տեխնիկական գիտությունները: Մյուսներն այս երկուսին զիջել են: Զիջել են, բայց ինչ-որ չափով իրենց «լուման» են ունեցել ծրագրի՝ նպատակին հասնելու գործում:

*«Մրցանակաբաշխությունն անցկացվում է Հայաստանի մտավոր կյանքի աշխուժացման նպատակով»,*-հայտնեց Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ, Համաբխարհային հայկական կոնգրեսի փոխնախագահ **Վլադիմիր Աղայանը:**

Նախաձեռնության շրջանակներում մասնակիցների գործունեությունը մեկանգամյա չէ: Նախատեսվում է նրանց ընդգրկել նաեւ հետագա ծրագրերում:

*«Ծրագրերը շարունակվելու են: Անհրաժեշտ է, որ մրցույթին մասնակցող երիտասարդները կաղվեն մեր երկրի հետ: Ռուսաստանի հայերի միությունն ու Համաբխարհային հայկական կոնգրեսը գիտությունը դիտարկում են Հայաստանի զարգացման կարեւորագույն բաղադրիչ: Հայաստանը գիտության ոլորտում մշտապես լավագույն ավանդույթներ է ունեցել, եւ մենք գտնում ենք, որ աջակցության միջոցով դրանք պետք է պահպանել»,*-ընդգծեց Ռուսաստանի հայերի միության փոխնախագահ **Միհր Շահգելդյանը:**

ՀՀ ԳԱԱ-ն որոշել է նաեւ երիտասարդ գիտնականների համար սահմանել «Ակադեմիա» անվանակարգով ամենամյա մրցանակ: Այն կհայտարարվի մինչեւ 35 տարեկան այն երիտասարդների համար, որոնց աշխատանքները հավաքել են ամենաբարձր իմպակտֆակտորը: Մրցանակի չափը սահմանվել է 2000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: